

Փրակայի մէջ երէկ սկսաւ Լեոնա-
յի Ղարաբաղի տագնապի խաղաղ
լուծման բանակցութիւններուն մէջ
Հայաստանի եւ Արցախի միջին
գահներու անձնական ներկայացու-
ցիչներուն հանդիպումը: Այս նպատա-
կով Չեխիա մեկնած է նախագահ Ռո-
պերթ Քոչարեանի ներկայացուցիչ
Թաթուլ Մարգարեան, որ նաեւ Հայաս-
տանի արտաքին գործոց փոխ նախա-
րարն է: Փրակայի մէջ տեղի ունեցող
հանդիպումը Յրդն է թաթուլ Մարգար-
եանի եւ իր պարզեցման պաշտօնա-
կիցի Սրայ Ալիմովի միջոցով:

«ՓԱՐԻՉ - 2» ԺՈՂՈՎԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ

Վարչապետ Ռաֆիք
Հարիրի երէկ Ֆրանսայի
դեսպան Ֆրիտի Լը
Քուրթիէի հետ քննարկեց
«Փարիզ - 2» ժողովին նա-
խապատրաստական աշ-
խատանքները: Ժողովը
պիտի գումարուի Ֆրանս-
սա, «Էլիզէ» պալատին
մէջ, 23 Նոյեմբերին,
Ֆրանսայի նախագահ
ժաք Շիրաքի հրահրով:
Տեսակցութեան հետք
Ֆրանսայի դեսպանը
նշեց, որ «Փարիզ - 2» ժո-
ղովին նախապատրաս-
տական աշխատանքները
հեղափոխական են եւ
հակադիմադրական են:
«Կարելի է ըսել, որ «Փարիզ -
2» ժողովը կը ներկայացը-
նէ սքանչելի առիթ մը
նկատի ունենալով անոր
բնոյթը եւ մասնակցու-
թեան տարրերը: Պէտք
է մտահոգ ընել
նաեւ ընդհանուր միջո-
ցաբար, որ ստեղծուած է
այս ժողովին շնորհիւ»,
աւելցոց ան:



Հարիրի - Լը Քուրթիէ հանդիպում

«Փարիզ - 2» ժո-
ղովին նախապատրաս-
տական աշխատանքները
հեղափոխական են եւ
հակադիմադրական են:
«Կարելի է ըսել, որ «Փարիզ -
2» ժողովը կը ներկայացը-
նէ սքանչելի առիթ մը
նկատի ունենալով անոր
բնոյթը եւ մասնակցու-
թեան տարրերը: Պէտք
է մտահոգ ընել
նաեւ ընդհանուր միջո-
ցաբար, որ ստեղծուած է
այս ժողովին շնորհիւ»,
աւելցոց ան:

«ՓԱՐԻՉ - 2» ԺՈՂՈՎԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ԵՍ

Լիբանանեան քաղա-
քական եւ տնտեսական
իրադարձութիւններուն
ու գաղափարներուն հե-
տեւող դէտեռու համա-
ձայն, «Փարիզ - 2» ժող-
ովը նշանակալից իրագոր-
ծում մը պիտի ըլլայ Լի-
բանանի համար, յատկա-
պէս նկատի ունենալով
քաղաքական եւ տնտե-
սական շրջանային պայ-
մանները:

Շար.՝ էջ 10

ՇԱՐՈՆ - ՆԵԹԱՆԻԱՇՈՒ ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՄՐԻ՝ ԼԻՔՈՒՏԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՇԱՄԱՐ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն առաւելութիւն
ձեռք ձգած է Լիբուտի ղեկավարութեան համար մղած
պայքարին մէջ, որուն մէջ իր մրցակիցն է արտաքին
գործոց նախարար Պենիամին Նեթանիահու:
«Նտիոթ Ահրոնո»-ի կողմէ կազմակերպուած հար-
ցախոյզի մը արդիւնքները ցոյց տուին, որ Լիբուտի
քուէարկողներուն 54 առ հարիւրը Նոյեմբեր 28ի ընտ-
րութեան քուէները պիտի
տայ Շարոնի: Հարցախոյ-
զին մասնակցողներուն 38
առ հարիւրը միայն ի
նպատակ Նեթանիահուի
պիտի քուէարկէ: Հարցա-
խոյզին արդիւնքը՝ ըստ
մեկնարաններուն, ցոյց
կու տայ, թէ նախկին վար-
չապետ Նեթանիահու, որ
յայտարարած է, թէ աւե-
լի խիստ միջոցառումներ
պիտի որդեգրէ պարզե-
տինցիներուն դէմ, չէ յա-
ջողած համոզել Լիբուտի
քուէարկողները, թէ պի-
տի կարենայ վերջ տալ պարզե-
տինցիներուն երկամեայ ըմ-
բոստութեան, ինչպէս նաեւ՝ լուծում մը գտնել Իս-
րայէլի տագնապահար տնտեսութեան:

Լիբուտի պատգամաւորները Նոյեմբեր 28ին պիտի
ընտրեն իրենց նոր ղեկավարը, որ պիտի ըլլայ նաեւ
կուսակցութեան պաշտօնական թեկնածուն վարչա-
պետական ընտրութիւններուն: Մեկնարաններ կը
նախատեսեն, որ Յունուար 28ի ընտրութիւններուն

«Նտիոթ Ահրոնո»-ի կողմէ կազմակերպուած հար-
ցախոյզի մը արդիւնքները ցոյց տուին, որ Լիբուտի
քուէարկողներուն 54 առ հարիւրը Նոյեմբեր 28ի ընտ-
րութեան քուէները պիտի
տայ Շարոնի: Հարցախոյ-
զին մասնակցողներուն 38
առ հարիւրը միայն ի
նպատակ Նեթանիահուի
պիտի քուէարկէ: Հարցա-
խոյզին արդիւնքը՝ ըստ
մեկնարաններուն, ցոյց
կու տայ, թէ նախկին վար-
չապետ Նեթանիահու, որ
յայտարարած է, թէ աւե-
լի խիստ միջոցառումներ
պիտի որդեգրէ պարզե-
տինցիներուն դէմ, չէ յա-
ջողած համոզել Լիբուտի
քուէարկողները, թէ պի-
տի կարենայ վերջ տալ պարզե-
տինցիներուն երկամեայ ըմ-
բոստութեան, ինչպէս նաեւ՝ լուծում մը գտնել Իս-
րայէլի տագնապահար տնտեսութեան:

Պարզետինցիները ստանձնեց իսլամա-
կան ժիհատ կազմակերպութիւնը:
«Նտիոթ Ահրոնո»-ի կողմէ կազմակերպուած հար-
ցախոյզի մը արդիւնքները ցոյց տուին, որ Լիբուտի
քուէարկողներուն 54 առ հարիւրը Նոյեմբեր 28ի ընտ-
րութեան քուէները պիտի
տայ Շարոնի: Հարցախոյ-
զին մասնակցողներուն 38
առ հարիւրը միայն ի
նպատակ Նեթանիահուի
պիտի քուէարկէ: Հարցա-
խոյզին արդիւնքը՝ ըստ
մեկնարաններուն, ցոյց
կու տայ, թէ նախկին վար-
չապետ Նեթանիահու, որ
յայտարարած է, թէ աւե-
լի խիստ միջոցառումներ
պիտի որդեգրէ պարզե-
տինցիներուն դէմ, չէ յա-
ջողած համոզել Լիբուտի
քուէարկողները, թէ պի-
տի կարենայ վերջ տալ պարզե-
տինցիներուն երկամեայ ըմ-
բոստութեան, ինչպէս նաեւ՝ լուծում մը գտնել Իս-
րայէլի տագնապահար տնտեսութեան:

ԷՏ. ՊԻ. ԱՅ. ԿԸ ԶԳՈՒՇԱՅԼԷ

«ՔԱՅԻՏԱ» ԿՐՆԱՅ «ԶԳԱՅԱՅՈՒՆՑ»

ՅԱՐԱՅԱԿՈՒՄՆԵՐՈՒ ԶԵՆԱՐԿԵԼ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՉ

ՌԱՇԽԻՆԿՈՒՄ, 15 (ՌՈՅԹԸՐԸ).- «Քայիտա» ցան-
ցը կրնայ Մ. Նահանգներու մէջ «զգայացուց» յար-
ձակումներու ձեռնարկել՝ հաւանական թիրախներ
ուսնայով քարիզի եւ կորիզային ճարտարարուեստ-
ները, օդանաւեր կամ ազգային խորհրդանշաններ
հանդիպող կեդրոններ, զգուշացուցած է ԷՏ. ՊԻ.
Այ. Լը Քուրթիէի օրը:
Մինչ վտանգի համեմատութիւնը կը մնայ դեղին
կամ «բարձր», այսինքն ահաբեկչական բնոյթի յար-
ձակումներու մեծ վտանգ, ԷՏ. ՊԻ. Այ. Լը Քուրթիէ
իսլամ ծայրայեղականներու ցանցը կրնայ փորձել
չատ մեծ վնաս հասցնել Երեւանի տնտեսութեան
եւ շատ մեծ թիրտի գոհներ խելի:
ԷՏ. ՊԻ. Այ. Լը Քուրթիէ Նոյեմբեր 12ին ենթադրաբար
Պրն Լատինի կողմէ պատգամի մը սփռումը: Ժապա-
ւէնին վրայ ձայնը գոմարանած է աշխարհի տարած-
քին արեւմտեան կեդրոններու դէմ նորագոյն յար-
ձակումները եւ սպառնացած յաւելել յարձակում-
ներու դիմել Մ. Նահանգներու եւ անոնց դաշնակից-
ներուն դէմ, եթէ Մ. Նահանգներ Իրաքի դէմ զինու-
որական քայլերու դիմեն:
ԷՏ. ՊԻ. Այ. Լը Քուրթիէ սակայն, թէ նկատի առած, որ
ծրագրուած որեւէ յարձակումի մասին յստակ տեղե-
կութիւն գոյութիւն չունի, երկրին մէջ վտանգի ընդ-
հանուր մակարդակը պիտի չբարձրացուի:
Անիկա յայտնած է նաեւ, որ ամերիկեան կառա-
վարութիւնը տակաւին կ'ուսումնասիրէ սփռուած
ժապաւէնը ճշդելու համար, թէ անիկա իսկապէս Ու-
սամա Պրն Լատինի ձայնն է:

ՄԱԿԻ ԶԷՆՔԻ ՔՆՆԻՉՆԵՐԷՆ ԿԸ ՊԱՀԱՆՉՈՒԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼ

Ռուսիա կոչ ուղղեց
Իրաք վերադարձող
քննիչներուն, որ
իրենց ուշադրութիւնը
կենտրոնացնեն միայն
սպալիման աշխա-
տանքին վրայ: Իրաք-
եան օրաթերթերը
իրենց կարգին պա-
հանջեցին, որ քննիչ-
ները ըլլան առարկա-
յական եւ ենթակալ չը-
լան Միացեալ Նա-
հանգներու սպիտակ-
թեան:



Մանիլայի մէջ ոստիկաններ կը ձերբակալեն
հակամարտիկներ ցոյցի մը մասնակիցները

Մոսկուա, որ Պաղ-
տատի դաշնակիցնե-
րէն է Խորհրդային
Միութեան օրերէն,
կ'ուզէ վստահ ըլլալ,
թէ ՄԱԿի քննիչները
Ուաշինկթընի կողմէ
պիտի չօգտագոր-
ծուին՝ արդարացելու
համար Իրաքի դէմ վիճ-
աւորական գործողու-
թիւն մը, որուն թիրա-
խը պիտի ըլլայ տա-
պալել նախագահ
Սադամ Հիւսէյնի իշ-
խանութիւնը: Ռուսիոյ

Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆ ԿԸ ՏԵՍԱԿՑԻ ՖՐԱՆՍԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ՀԵՏ

Լեոնայի Ղարաբաղի նախագահ Արկաղի Ղուկաս-
եան, որ Ֆրանսա կը գտնուի մասնակցելու համար
Արցախի «Հիւսիս-Հարաւ» մայրուղիի շինութեան
համար կայացող դրամահաւաքին, երէկ տեսակցու-
թիւններ ունեցաւ Ֆրանսայի քաղաքական գործիչ-
ներու հետ:
Ֆրանսայի Ազգային ժողովին մէջ նախագահ Ղու-
կասեան հանդիպում ունեցաւ Ֆրանսայի խորհրդա-
րանի փոխ նախագահ Ռուտի Սալլի, հայ-ֆրանսա-
կան բարեկամութեան խումբի նորընտրեալ նախագահ,
պատգամաւոր Ֆրանսուա Ռոչպուլանի եւ Իսսի-լէ-
Մուլինոյի քաղաքապետ, պատգամաւոր Անտրէ Սան-
թիմիի հետ: Հանդիպումին Ռուտի Սալլ Ղուկասեանի
տեղեկացուց Ֆրանսայի խորհրդարանին մէջ «Լեո-
նայի Ղարաբաղի Ուսումնասիրութեան» խմբակի
կազմաւորման մասին: Խմբակը պիտի բաղկանայ
խորհրդարանականներէ եւ պիտի զօրոյ Ֆրանսայի
խորհրդարանի ժողովին Լեոնայի Ղարաբաղի տագնա-
պին լուծման գործընթացին եւ ընդհանրապէս Լեո-
նայի Ղարաբաղի մասին անկողմնակալ տեղեկա-
կազմակերպութեան խումբի արտաքին գործընթացի:
Ղուկասեան երախտագրութիւն յայտնեց Լեոնայի Ղարա-
բաղի հանդէպ ցուցաբերուած հետաքրքրութեան հա-
մար:
Արկաղի Ղուկասեան նաեւ հանդիպում ունեցաւ
Ֆրանսահայ լրագրողներու եւ Ֆրանսահայ բարե-
բարներու հետ:

ՔԱՆԱՏԱ - ՀԱՅԱՍՏԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանի արտաքին գործոց նախարար
Վարդան Օսկանեան երէկ ընդունեց Քանաւոն
յի արտաքին գործոց նախարարութեան Միջին
Արեւելքի եւ Եւրոպայի բաժանմունքի պատաս-
խատու, արտաքին գործոց նախարարի տե-
ղակալ Կար Նուբարը:
Հուլիսի հանդէպ Քանաւոնի իշխանութիւն-
ներուն մօտեցումներուն մէջ էական տեղա-
շարժեր արձանագրուած են որդեգրուած է
աւելի աշխուժ մասնակցութեան քաղաքակ-
ցութիւնը:
Նախարար Օսկանեան եւ Նուբարը բնար-
կեցին հայ - քանաւոնի դրացի երկիրներու
իտեւ իրարմիջ յարաբերութիւններուն վե-
րաբերող հարցեր: Անոնք անդրադարձան Հա-
յաստանի եւ Քանաւոնի միջեւ կապերու գար-
գացման հեռանկարներուն:
Կար Նուբարը առաջարկով նախարար Օս-
կանեան անդրադարձաւ Լեոնայի Ղարաբա-

ՊՈՒՐՆԱԿԱՆ ԿԱՐԿԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պուրճ Համուտի քաղաքապետութիւնը կազմակեր-
պած է աճուրդ մը՝ փակ եւ կնքուած պահարանով,
Պուրճ Համուտի սպանդանոցին տուրքերուն վերա-
բերելով: Աճուրդը պիտի կայանայ Երեւանի, 3 Դեկ-
տեմբեր 2002ին, կէսօրուան ձիշը ժամը 12:00ին:
Աճուրդը, որոնք կը փափաքին մասնակցի աճուր-
դին կրնան իրենց դիմումը՝ փակ եւ կնքուած պահա-
րանով, ներկայացնել Պուրճ Համուտի քաղաքապե-
տութեան վարչակազմի հարցերու գրասենեակ, ուրկէ
նաեւ կրնան ստանալ աճուրդի պայմաններուն մա-
սին տեղեկութիւններ պարունակող տետրը՝ վճարե-
լով 150 հազար լիբանանեան քրոնով:
Դիմումները նաեւ կարելի է յղել քաղաքապետու-
թեան՝ երաշխաւորուած փոխով՝ փոխառ ընկալա-
գիրի: Այս պարագային պարտաւոր է ամենէն ուշը
մինչեւ Երկուշաբթի, 2 Դեկտեմբեր 2002, կէսօրուան
ժամը 12:00 դիմումը արձանագրել քաղաքապետու-
թեան վարչակազմի հարցերու գրասենեակի մօտ:
ՊՈՒՐՆԱԿԱՆ ԿԱՐԿԱՐՄԱՆ
ՔԱՂԱՔԱՐԱՆ
ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄԻՆՉ ԵՐԿԻՐԸ ԿԸ ԴԻՍԱԳՐԱԻ ԲԱՉԱՐԱՆՅՈՒ ՏԱԳԱՊԵՐԸ ՀՈՒ ԴԻՆԹԱՌԻ ԴԱՐՉԱԻ ՀԱՍՏԱՅՆԱՎԱՐ ԶԻՆԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐԸ

ՊԷՑԻՃԻՆԿ, 15 (ՌՈՅԹԸՐԸ).- Հու-
լիսի ձեռնարկու Ուրբաթ օր դարձաւ Չինաս-
տանի համապարփ կառավարութեան
ղեկավարը, սակայն ձիւնիկի կառ-
չած կը մնայ իշխանութեան՝ նկատի ու-
նենալով, որ կուսակցութեան նոր ղե-
կավարութեան մեծ մասը անոր զաչ-
նակիցներէն կազմուած է:
Հուլիս (59 տարեկան) կուսակցապետ
նշանակուած է՝ ղեկավարներու «Դո-
րոզ սերունդին» գլխավորութիւնը
ստանձնելով՝ յարգելով Մաօ Ցեթուն-
կի, Տեյն Զիաֆինի եւ Չիւնկի: Անոր
պարտականութիւնն է առաջնորդել Չի-
նաստանի տնտեսական բարեկարգում-
ները՝ միաժամանակ պահպանելով իշ-
խանութեան վրայ կուսակցութեան հա-
կալիւնը:
Ամիսներու գաղտնի քննարկումնե-
րէ ետք, նոր ղեկավարութիւնը ներկա-

յացաւ Ուրբաթ օր ժողովուրդին Մեծ
Սրահին մէջ տեղի ունեցած հանդիսու-
թեան մը ընթացքին՝ համայնապար Չի-
նաստանի մէջ առաջին անգամ ըլլալով՝
առանց մաքրագործումներու, դաւերու
կամ արեւահեղութեան:
Կուսակցութեան նոր Կեդրոնական
կոմիտէին անդամներուն թիւը 7էն 9ի
բարձրացած է եւ բաղկացած մեծ մա-
սամը Չիւնկի դաշնակիցներէ, ինչ որ
կ'ապահովէ, թէ ան իսոքա պիտի ունե-
նայ երկրին քաղաքականութեան մէջ,
մինչ Չինաստան հետզհետէ թմալ ստա-
ցող անգործութիւն կը դիմագրաւէ եւ
կը յայտնուի իրրեւ միջկարգային մեծ
ուժ:
«Որքան մեծ ըլլայ անդամներուն
թիւը, այնքան նուազ իշխանութիւն
Շար.՝ էջ 2

Շար.՝ էջ 10

ՔԱՐԱՀԱՏՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒ ՓԱԿՈՒՄԸ ՎՆԱՍ ՊԻՏԻ ՀԱՍՅՆԷ ՎԵՅ ՀԱԶԱՐ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐՈՒ

Քարահատման վայրերու կապալառուներու սենտիքայի ընդհանուր քարտուղար Եսահիա Ժապեր էրէկ կառավարութեան պահանջեց չգործադրել քարահատման վայրերը փակելու նախարարաց խորհուրդին որոշումը՝ դիտել տալով, որ նշեալ որոշումը տրուած է իբրև արդիւնք դատական իշխանութեան կողմէ քարահատման վայրերու մասին մշակուած ծրագիրին, ինչպէս նաեւ աւագ եւ խիճ ներածելու հաստատութեան մը հիմնադրութեան:

Ժապեր յայտնեց, որ քարահատման վայրերուն փակումը պատճառ պիտի դառնայ աւելի քան վեց հազար աշխատատեղերու անգործութեան, խիճի չգոյութեան եւ շինարարական աշխատանքներու կասեցման, որ իր կարգին պիտի պատճառէ միլիոնաւոր տղայներ արժող համաձայնութիւններու եւ ներդրումներու վնասը:

Միւս կողմէ, կենսոլորտի նախարար Միշել Մուսա շեշտեց, որ կառավարութեան կողմէ քարահատման վայրերու փակման առնչութեամբ տրուած որոշումը անպայման պիտի գործադրուի:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Յարութ Մարտիրոսեան եւ զաւակունք Մարտիրոս եւ Ժաք Մարտիրոսեան
Օր. Նազելի Մարտիրոսեան
Տէր եւ տիկին Թորոս Մարտիրոսեան
Տիկին Նուարդ Մարտիրոսեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Անդրանիկ Պօլոյզեան եւ զաւակունք
Տիկին Հանրիէթ Հելվաճեան եւ ընտանիք
Իսա ընտանիք
Սլիմ ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց աղջկան, մօր, մեծ մօր եւ հարազատին՝

ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ (ՕԳՆԵԱՎ՝ 1948ԻԳ)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 15 Նոյեմբեր 2002, երեկոյեան ժամը 5:00ին:

Յուզարկաւորութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ծաբաթ, 16 Նոյեմբեր 2002, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուր կէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները պիտի իմպուեցուն ճանգուցեալին բնակարանը Ժէլ Էյ Տիպ, Ծաբաթ 16, Կիրակի 17 եւ երկուշաբթի 18 Նոյեմբերին:

ՄԱՀԱԶԴ

ԼՕԽի «Նայիրի» մասնաճիւղի վարչութիւնը կը գուժէ իր շրջանի ընկերուիներէն՝

ԹԱԳՈՒՇԻ ԳՐԳԵԱՇԱՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 14 Նոյեմբեր 2002ին:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Ասատուր եւ Օտրի Իզմիրեան
Օրիորդ Ովսաննա Իզմիրեան
Տէր եւ տիկին տղթ. Վարուժան եւ Զարուկ Զալեան
Եւ զաւակունք

Պէնյեան ընտանիք
Գրգեաշարեան ընտանիք
Պահարեան ընտանիք
Պալեան ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց քրոջ, մօրաքրոջ եւ հարազատին՝

ԹԱԳՈՒՇԻ ԳՐԳԵԱՇԱՐԵԱՆԻ (ՕԳՆԵԱՎ՝ ԻԶՄԻՐԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 14 Նոյեմբեր 2002ին, իր բնակարանին մէջ, Նաբաշ:

Յուզարկաւորութեան պաշտամունքը պիտի կատարուի Կիրակի, 17 Նոյեմբեր 2002, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Հայ Աւետարանական Ա. եկեղեցւոյ մէջ, «Մեքսիք» փողոց, ուր կէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրեր Շրպպէի Հայ Աւետարանական գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը Նաբաշ, Կիրակի 17, երկուշաբթի 18 եւ երեքշաբթի 19 Նոյեմբերին: Հեռ. 04-412687:
- Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել Հայ Աւետ. Կեդրոնական Բարձր. վարժարանի «Շմաւոն Իզմիրեան» կրթական ֆոնտին:

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՅԱՐԶԱԿՈՒՄՆԵՐԸ ԺՆՏԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ ԶՈՒՆԵՑԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐԱՅ

Կ'ԸՍԷ ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ ընդունեց երեսփոխաններ, որոնց հետ քննարկեց քաղաքական եւ տնտեսական հարցեր:

Նախագահ Լահուտ յայտնեց, որ 11 Սեպտեմբերին Միացեալ Նահանգներու դէմ գործուած յարձակումները, հակառակ բոլոր մեկնաբանութիւններուն, ժխտական հակազդեցութիւն չեն ձգած Լիբանանի վրայ:

Նախագահ Լահուտ նշեց, որ Լիբանանի վերջին իրագործումները կը նպաստեն լիբանանցիներուն արժանապատուութեան, հաստատութիւններուն, պաշտօնական ու ոչ պաշտօնական մարմիններուն, ժողովուրդին եւ տնտեսութեան:

Ան ըսաւ, որ որեւէ նպատակի համար եւ ժամանակամիջոցի ընթացքին պիտի արգիլուի առիթներ կորսնցնելու նախկին քաղաքականութեան վերադարձը, «որովհետեւ անցեալին ընդունելի նկատուող հակազդեցութիւններն ու առնուած քայլերը յարց ընդունելի չեն՝ նկատի ունենալով երկրին դիմադրուած զգալուն հարցերը եւ տիրող պայթուցիկ կացութիւնը»:

Իրենց հանդիպումներէն ետք, երեսփոխաններ դիտել տուին, որ նախագահ Լահուտ մտադրած է շարունակել իրապաշտ քաղաքականութիւնը, որ յաջողուցած է բազմա-

թիւ նպատակներ եւ Լիբանանի պարգեւած է կայունութիւն մը եւ արտօնած տնտեսական վիճակին բաշխումը համար ծրագրիներու մշակումը, որուն ապացոյցն է յառաջիկայ շարժումն ընթացքին կայանալիք «Փարիզ - 2» ժողովը:

Անդրադառնալով շրջանային կացութեան՝ նախագահ Լահուտ յայտնեց, որ պաղեստինեան հողերուն վրայ շարունակուող խորախնայեան բռնարարքները այսուհետեւ պիտի սկսին իրենց հակազդեցութիւնը ունենալ իսրայէլի մէջ կայանալիք ընտրապայքարին վրայ:

Նախագահ Լահուտ դիտել տուաւ, որ հաւանաբար իսրայէլեան Լիբուտ կուսակցութեան ներքին

վէճերը ցոյց կու տան նշեալ իրականութիւնը՝ շեշտելով, որ իսրայէլեան ներքին որեւէ հարցի մեկնաբանութիւնը ցոյց կու տայ, թէ իսրայէլացի ղեկավարներ, յատկապէս անոնք, որոնք հիմնական դիրքեր կը գրաւեն, վերաւորութեան նոյն մետաւիճի երկու կողմերը կը կազմեն:

Պատասխանելով մէջ նախագահ Լահուտի այցելեցին երեսփոխաններ Ֆայսալ Տաուուս, Հասան Աշքար, Ուսամա Սաատ, Սամի Ռաթիպ, Ալի Հասան Նալի, Սամիր Ազար, Ալի Նալի, Նասիր Քանտիլ, Նազիհ Մանուր եւ Պապուզի երեսփոխանական պլոքը:

ՀՈՒ ԴԻՆԹԱՌԻ ԴԱՐՁԱՒ ՀԱՄԱՅՆԱՎԱՐ...

Շարունակուած Կ. ԷԷԸ

Կ'ունենայ իւրաքանչիւր անհատ», ըսած է չիւն քաղաքական հարցերու մասնագետ մը եւ անվիցուցած. «Ինչքան մեծ ըլլայ ձիանկի դաշնակիցներուն թիւը, այնքան աւելի անկրնայ պղծութիւն ունենալ որոշումներու կայացման վրայ՝ հանգստեան կոշտելէ ետք»:

Ճիանկ պահպանած է իր պաշտօնը, իբրեւ Չինուորական Կեդրոնական Լսորհուրդին

ղեկավար, ինչպէս ըրած էր Տէնկ 2 տարի՝ 1987ին Կեդրոնական Կոմիտէին հեռանալէ ետք:

Չ. Կ. Լսորհուրդը կը գլխաւորէ աշխարհի մեծագոյն բանակը: Արտաքին աշխարհին գրեթէ անծանօթ Հու գործնապէս ձիանկի ժառանգորդը «նշանակուած է», երբ 1992ին դարձած է կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէին ամենէն երիտասարդ անդամը, սակայն ատկէ ի վեր ան լուսարձակներէ հեռու մնացած է: Ան առաջին անգամ Արեւմուտք այցելած է միայն անցեալ տարի:

Ան պաշտօնապէս իբրեւ նախագահ ձիանկի պիտի յաջորդէ Մարտին, սակայն նոյնիսկ այն ատեն ան միայն անունով Չինաստանի ղեկավարը պիտի ըլլայ՝ նկատի ունենալով Կեդրոնական Կոմիտէի կապը:

Մ. ՆԱԿԱՆԳԵՐ ԿՈՂՁՈՒՆԵՆ

Մ. Նահանգներ Ուրբաթ օր շնորհաւորած են Հու ձիանկը եւ խոստացած, թէ պիտի շարունակեն կոշուղել նոր ղեկավարութեան, որ տնտեսական բարեկարգումները շարունակէ եւ մարդկային իրաւանց մարզը բարելաւէ:

Սպիտակ Տան բանբեր Սքոթ Մքլելըն յայտնած է, որ ամերիկացի եւ չիւն ղեկավարներու միջեւ բարձրաստիճան տիպիկի ծիրէն ներս, փոխ նախագահ Տիք Չէյնի յառաջիկայ տարի Չինաստան պիտի այցելէ:

ԿՈՒՉՈՒԻ

● Չիքոնոն քար գամող մը: Հեռ. 03-963499:

ԿՈՒՉՈՒԻ

● Ոսկի փայլեցնող (ճիւղ) գործաւոր մը: Հեռ. 01-242549:

ԿՈՒՉՈՒԻ

● Վարպետ ոսկերիչ մը (սետեր): Դիմել՝ հեռ. 03-719404, պրն. Շոգէֆին:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԵՎԻՃ ՊԵՐՐԻ ԵՐԷԿ Ատուսիէի, Մարիի, Քաարաիյէր Ժըքիի, Մեւժա-յունի եւ Տէր Քեյֆայի մէջ հանդիպումներ ունեցաւ բնակչութեան պատուիրակութիւններու հետ, որոնց հետ ընթացիկ քաղաքական, շինութեանց եւ այլ հարցեր:

Նապարիէի մէջ Պըրրի տեսակցութիւն մը ունեցաւ առեւտրականներու միութեան հետ, որուն հետ ընթացիկ քաղաքական կարիքները:

● ՓՈՒՎ վարչապետ Իսամ Ֆարէս երէկ վերանորոգեց իր պահանջը՝ անյապաղ կատարել ղիւանազիտական նշանակումները:

Ֆարէս, յայտնեց, որ Նիւ Եորքի, Գերմանիոյ եւ Իտալիոյ ՄԱԿի եւ ԵՈՒՆԵՍԿՕ-ի մէջ լիբանանցի դեսպաններ չեն նշանակուած:

● ԵՐԻՏՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ Եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէս երէկ գլխաւորեց լիբանանեան երիտասարդական միութիւններու միացեալ ժողովը, ուր յայտարարեց, թէ հանդիպումը կ'առաջարկէ մշակել երիտասարդական յստակ ուղղապարստելու եւ ուսումնասիրութիւնները ներկայացընել երիտասարդներու աշխատանքները ու նախաձեռնութիւնները բարելաւելու հետեւեալով:

● ԱՄԵՐԻԿԵԱՆ Քոնկրէսին Լիբանան գտնուող պատուիրակութիւնը «Թասք Ֆորս Ֆոր Լեպլընան» եւ «Մըքսի Քոր» հաստատութիւնէն պատուիրակութիւն մը, ինչպէս նաեւ Ամերիկեան Բարգաւաճման Գործակալութեան ներկայացուցիչներ երէկ շրջեցան եւ ստուգեցին այս վերջինիս գործադրած բարգաւաճման ծրագրերը՝ Պեքաշի, Հասպայաի, Մերժապուհի եւ Պընթ Ժըպէյի մէջ:


● ՇԻԻՆԵՐՈՒ Գերագոյն խորհուրդի փոխ նախագահ շէյխ Ապտէլ Էմիր Քապալան երէկուան իր քարոզի մէջ կոչ ուղղեց՝ շրջանցելու քաղաքական բացակէները եւ տարածելու իսկական ազգային եղբայրութեան զգացումներն ու մթնոլորտը շեշտելով, որ բոլոր համախմբումներն ու հանդիպումները պէտք է ծառայեն հայրենիքի եւ քաղաքացիին:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ ԿԱՆԱՅ ԶԱՅՆ
Վաղը՝ Կիրակի կեսօրուան ժամը 12ին կրնաք լսել Փարիզի մեր պաշտօնակից «ԱՅՔ. ԷՖ. ԷՄ.»-ի հարցազոյցին կրկնութիւնը
ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱԸ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ԴԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՅ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱՎԱՆ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՆ (ՀԵՀՈՄ)
ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՇԱՆԴԵԱՆ Եւ իր նուազախումբը
Ելոյթ կ'ունենայ ԱՐԱՐԱՏ ԱՇԱՐՈՆԵԱՆ Եւ իր նուազախումբը
Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 21 Նոյեմբեր 2002ին, երեկոյեան ժամը 9:00ԵՆ սկսեալ, «Ուայթ Թաուըր» պանդոկի «Մէյսլ Ռիմ» ճաշարանի մէջ, Չալքա:

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է Հ. Յ. Դ. ԼԵՄԻ 2003Ի ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՑԸ

Մ. Նահանգներ Ուրբաթ օր շնորհաւորած են Հու ձիանկը եւ խոստացած, թէ պիտի շարունակեն կոշուղել նոր ղեկավարութեան, որ տնտեսական բարեկարգումները շարունակէ եւ մարդկային իրաւանց մարզը բարելաւէ:



Սպիտակ Տան բանբեր Սքոթ Մքլելըն յայտնած է, որ ամերիկացի եւ չիւն ղեկավարներու միջեւ բարձրաստիճան տիպիկի ծիրէն ներս, փոխ նախագահ Տիք Չէյնի յառաջիկայ տարի Չինաստան պիտի այցելէ:

1973 2003
ՍԱԿ 10,000 ԼԻԲ. ՈՍԿԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԿԱԻԵՐԱԳՐԱԿԱՆ ԺԱՊԱԿԵՆ ՄԸ

Հ. Յ. Դ. Լիբանանի Հայ Դատի յանձնախումբին կազմակերպություններ, երէկ երեկոյան ժամը 8:00ին, «Ազրայեան - Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ցուցադրութիւնը Հայկական Յեղասպանութեան նուիրուած «Արմինիա. Ճենոսայտ Տինայտ» («Հայաստան՝ ուրացուած ցեղասպանութիւն») խորագիրով վաւերագրական ժապաւէնին: Ձեռնարկին ներկայ էին Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան, Հայ կաթողիկէ պատրիարքական փոխանորդ Վարդան եպս. Ազգարեան, լիբանանահայ կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ, միաբան հայրեր, ինչպէս նաեւ՝ մեծաթիւ ներկաներ:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու ունկընդրութենէն ետք Հայ Դատի յանձնախումբին անունով բացման խօսքով Հանդէս եկաւ Մարալ Զոլոյեան, որ ներկայացնելէ ետք Հայկական Յեղասպանութեան անուրանալի փաստ ըլլալու իրողութիւնը եւ ցեղասպան պետութեան եւ այլ շահախնդիր պետութիւններու կողմէ անոր ուրացման քաղաքականութիւնը, «Արմինիա. Ճենոսայտ Տինայտ» ժապաւէնը նկատեց այսպիսի ոճիրներու դէմ ցցուող այլ փաստ մը: Ապա ան ներկայացուց ժապաւէնին աստղալիցի բեմադրիչ Մաթիւ Քառնին, որուն Հայկական Յեղասպանութեան ճշմարտութեան հանդէպ հաւատքին արդիւնքն է այս ժապաւէնը:

«Արմինիա. Ճենոսայտ Տինայտ» շուրջ երեսուն վայրկեաննոց վաւերագրական կարճ ժապաւէն մըն է՝ պատրաստուած Մաթիւ Քառնիի կողմէ եւ սփռուած՝ Աւստրալիոյ պետական «Էս. Պի. Էս.» պատկերասփիւռի կայանի «Տէլթրայն» հաղորդաշարէն 2002ի Օգոստոսին: Ժապաւէնին մէջ բեմադրիչը ուղեւորութիւն մը կը կատարէ Հայկական Յեղասպանութեան հետքերով: Անոր երթը կը սկսի Տէր Զօրի անապատէն, ուր ձեռքով տակաւին կարելի է հողին տակէն դուրս բերել նահատակներու աճիւններ, որոնց նահատակութիւնը օրին վկայուած է օտար դիւանագէտներու կողմէ, կը նկարէ Հայ հոգեւորականի մը հանդիպումները Յեղասպանութենէն ճողորմարած հայու մը արաբացած շառաւիղներուն, որոնք կը տազնապին իրենց ինքնութեան փնտրուածքով, Պէյրութի ՔԱՀԼԻ ծերանոցին մէջ կը լսէ վերապրողներու վկայութիւնները, իսկ Պոլսոյ մէջ՝ Հայկական Յեղասպանութիւնը ուրացող եւ ժխտող թուրք պատմաբաններու հակասական փաստարկումները, կ'այցելէ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին եւ, իբրեւ փաստ մշակութային շարունակուող ցեղասպանութեան, ցոյց կու տայ Արեւմտահայաստանի հայկական վանքերուն ներկայի եւ տարիներ առաջուան պատկերներու բաղդատականը: Ապա Մաթիւ Քառնի կ'անցնի աշխարհի կողմէ Հայկական Յեղասպանութեան ուրացման երեւոյթին: Ան կը նկարագրէ երուսաղէմի հայկական թաղամասը, որ իսրայէլացիներու կողմէ որդեգրուած խտրականութեան քաղաքականութեան պատճառով սկսած է նօսրանալ: Ժապաւէնը կը կեդրոնանայ մանաւանդ իսրայէլի պետութեան կողմէ Հայկական Յեղասպանութեան տարրուութեան նսեմացման ջանքերուն վրայ:

Ժապաւէնին ցուցադրութեան աւարտին խօսք առաւ Մաթիւ Քառնի, որ շնորհակալութեան խօսք ուղղեց բոլոր անոնց, որոնք կարելի դարձուցին «Ար-



Մաթիւ Զառնի

մինիա. Ճենոսայտ Տինայտ» ժապաւէնին իրականացումը: Ապա ան անդրադարձաւ ժապաւէնին հրապարակումէն ետք թրքական հակազդեցութիւններուն, որոնց ուժգնութիւնը զարմացուցած է բեմադրիչը: Ան նաեւ պատասխանեց ժապաւէնին պատրաստութեան առնչութեամբ ներկաներուն հարցումներուն:

Ձեռնարկի աւարտին, Հ. Յ. Դ. Լիբանանի Հայ Դատի յանձնախումբը գնահատանքի յատուկ յուշանուէրով մը պատուեց Մաթիւ Քառնին:

ԵՐԶԱՄՏՈՅՑ

Լիբանանի անկախութեան տօնին առիթով, բացառիկ յայտագիրով եւ գիներով, շրջապտոյտ դէպի Հայէպ, 22 - 25 Նոյեմբեր 2002ին:

Նախաճաշ, ըմպիչ, խրախմբներ, երկու աստղանոց պանդոկ փոխան 120 \$, միայն 95 \$, իսկ յոսս աստղանոց պանդոկ փոխան 165 \$, միայն 130 \$:

Սահմանափակ տեղեր:

Արձանագրութիւններ **ԱՅՃԵԱՆ ԹՈՒՐԶ**, հեռ. 01 / 261177 - 240654 եւ 03 / 233978:

ՀԱՄԱՉՈՒՄԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԶԱՄՏՈՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՆ

ԹԱԹԱ

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ

ՃԱԾԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՇԱՆԴԵՍ՝ Կիրակի, 5 Յունուար 2003

«Ֆենիսիա» պանդոկ: ԵՐԶԱՄՏՈՅԻՆ - Երկուշաբթի, 6 Յունուար 2003 UNESCO հանդիսարահին մէջ:

Մամրամասնութեան համար դիմել՝ հեռ. 01-249375 եւ 01-265899:

Հ. Յ. Դ. «ԿԱՐՄԻՐ ԼԵՌ» ԿՈՄԻՏԵՈՒԹԵԱՆ ԴԱՍՏԻՈՒՐԱԿՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ - ԱՅՆՃԱՐ

«ARMENIA: GENOCIDE DENIED»

Վաւերագրական ֆիլմի ցուցադրութիւն

(Ֆիլմի պատրաստութեան եւ անոր տեղեկանք արձագանգին մասին տեղեկութիւններ պիտի փոխանցուի Հայ Դատի Յանձնախումբը)

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 16 Նոյեմբեր 2002, երեկոյան ժամը 8:00ին, «Սարգիս Չէլթեան» ժողովրդային տան սրահին մէջ:

ՀՐԱԿԵՐ

Մեր սամնարաններով կրնաս նաեւ ճաշ եփել

Իւրաքանչիւր «ճենըրըլ էլեքթրիք» սամնարանի հետ «Արիսթոն» փուռ մը Գուէր

KETTANEH

Since 1922 Committed to serving you

19 25 չափի սամնարաններու վրայ այս բացառիկ առիթը ի գործ է միմեզ: Կարանքի սպասումը:

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ. Պուրճ Գանուտ - Քաղաքապետ. հրապարակ ԳԵՈՒՉԱՅՆ՝ 01-241000

2րդ մուտք. Սանբըր Պլանդիոն: Կառատունը ապահովուած:

السفير | النجم | الذئبية | السبت | البيرق | الثلاثاء

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

15 Նոյեմբերի թիւով տեղական մամուլը անդրադարձաւ է ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի քննիչներուն Պաղտատ վերադարձին, Նապոլուի մէջ տիրող լարուած եւ վտանգաւոր կացութեան ու լիբանանեան ներքին հարցերուն:

«Տիար» գրած է, թէ Պաղտատ յայտարարած է, որ իր համաձայնութիւնը թիւ 1441 քանաձեւին կը նշանակէ, որ Իրաք քանդուսի կ'ենքեր չունի:

«Անուար» նշած է, թէ Պաղտատ Երկուշաբթի կը պատրաստուի ընդունելու ՄԱԿի կէսօրի քննիչները եւ կը կարծէ, թէ Ուաշինգթոնի հետ իր պայքարը չէ ւարտած տակաւին: Ըստ թերթին, Պուշ եւ Փաուլը ըսած են, թէ Միացեալ Նահանգներ կը մերժեն յարձակում գործել իսլամներուն վրայ:

«Մուսթաքպալ»-ի համաձայն, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը ըսած է, թէ Ուաշինգթոնը երկար պիտի

չհամբերէ, եթէ Իրաք իր պարտաւորութիւններուն մէջ թերանայ: Ըստ թերթին, Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաք Պաղտատի խորհուրդ տուած է ՄԱԿի քննիչներուն հետ ամբողջական ձեւով գործակցելու:

«Նահար» նշած է, թէ Պաղտատ կը պատրաստուի երկար պայքարի մը Ուաշինգթոնի դէմ. Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնրլոտ Ռամսֆելտը հաստատած է, թէ Իրաք ունի քանդուսի կէսօր:

«Լիուս»-ի համաձայն, ամերիկեան դեսպանատունը իրենց քաղաքացիներուն կոչուողած է մինչեւ 7 Դեկտեմբեր Իրաքէն ու շրջակայքէն հեռանալու: Իրաքը կ'պահանջէ պատմաբանները վերցնել եւ կը պնդուի ամերիկեան խաղերէն:

«Մաֆիր» նշած է, թէ անհամաձայնութիւն կայ քննիչներուն եւ ընթացքին Միացեալ Նահանգներու ունեւալիք դերակատարութեան առնչութեամբ: Միջապային կոչեր Պաղտատը կը իրաւիքն գործակցելու:

Պաղտատին եւս հարցին առնչութեամբ

«Լիուս» գրած է, թէ մինչ Ուաշինգթոն ետդարձ կ'ընէ եւ կ'ընդունի խաղաղութեան համար թափուած ճիգերը, Շարուն Նապոլուի մէջ ամերիկեան փափաքը ոտնակոխելով կը յայտարարէ, թէ ոչ ոք կ'ընայ որոշել իսրայէլեան գործողութիւններուն սահմանը:

«Մաֆիր»-ի համաձայն, Շարուն կը մերժէ պինդադարի որեւէ առաջարկ, իսկ Եգիպտոս կը փորձէ իրականացնել ու հովանաւորել երեքամսուան համար պինդադարի ծրագիր մը:

«Նահար» նշած է, թէ Եգիպտոս անակրն կալ կերպով աշխուժացուց իր դերակատարութիւնը: Եգիպտոս կ'ապահովուի տնօրէնութեան սահմաններուն ետեւ Սրաֆաթի եւ Շարունի հետ:

«Անուար» գրած է, թէ իսրայէլացի պինդորները նոր բռնագրաւումներ կը կատարեն Նապոլուի մէջ եւ կը պատրաստուին ընդարձակ յարձակումի մը Կապայի վրայ:

«Մուսթաքպալ»-ի համաձայն, Ֆրանսայի նախագահը մտաւորապէս շարունակելու է:

ՄՍՍՑԱՆԸ

- **Շ. Ս. Ը. ՄԱԿԱՆ ՍԱՐԴՈՒ ԱՊՐՈՒՄՆԵՐ**
Հեղինակ՝ ՄԱՄՈՒԷԼ ՄԿՐՏԻՉԵԱՆ
Խմբագիր Վ. ԱՄԳԵԱՆ
Պէյրոս 2002
- **Հայաստանի Վանքերուն Եւ Եկեղեցիներուն Մշակութային Կորուստը**
1894-1896 եւ 1915-1925 տարիներուն (Բ. տպագրութիւն)
Հեղինակ՝ Շ. Տաճատ վրդ. Եարտընեան
Վեներտիկ Ս. Ղազար 2001
- **ԲԱԶՄԱՎԵՊ**
Հայագիտական-Բանասիրական-Գրական ՀԱՆԴԵՍ
1-4
Վեներտիկ Ս. Ղազար 2002

galerie **PIERROT**

Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans

Pour ses enfants on rêve toujours de ce qu'on n'a pas eu

PIERROT

réalisera tous vos rêves.

Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՄԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՍԱԼՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՆ - ՀԵՇՈՍ

ՂԱՍԱՆՕՍՈՒԹԻՆ

«ԻՆՉ Է - AURA - Ն ԵՒ ԱՆՈՐ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴՈՒՆ ՎՐԱՅ»

Դասախօս՝ **ԱՒՕ ՍԵՐՈՐԵԱՆ**

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 16 Նոյեմբեր 2002ի երեկոյան ժամը 6:30ին, ՀԵՇՈՍԻ կեդրոնատեղիին մէջ, կաթողիկոսարան - Աճրիլիա:

ՀՐԱԿԵՐ

Հարսանեկան Քարտերու Ընդհանուր Հարսանեկան

Հարպոյեան Կեդրոն - Պ. Համուտ
Հեռ.: 01-253008

IGOL MOTOR OIL

FUEL CARD

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՉԷ ԴԱԴՐԱԾ ՍՓԻՒՌՔԻ ՄԻՋՆԱԲԵՐՊԵ ԸԼԼԱԼԷ

Կ'ԸՍԷ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ՝ «ԱՉԳԱԿ»ԻՆ

ՀԱՐՑՈՒՄ. - Լիբանանի Կաթոլիկ եկեղեցու ղեկավարը, ըստ ձեռնարկի, տակալի կարելի է նկատել Սփիւռքի միջնաբերդը, քե՛ս արդեն ան իր տեղը գիշած է այլ գաղութներում:

ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ. - Ես այս գաղութը ճանաչում եմ 1964-ին, երբ երիտասարդ վարդապետ էի: Երբ վիեննայյան Լիբանանի եկեղեցու Սփիւռքի վարժարանին մեջ փոխ տնօրենի պաշտոնը վարելու, չփոխվեցի մտայ Լիբանանի հայկական գաղութին հետ: Կրնամ ըսել, որ այս գաղութը մինչև 1975 Սփիւռքի Մայր հայրենիքն էր: Լիբանանահայտնությունն էր, որ ծաղկեցուց Սփիւռքի միակ գաղութները, որոնք դարձրեցին եւ մշակութային կենտրոն մեջ վերելք ապրեցան: Պէտք չէ մոռնալ նաեւ, որ մինչև մեր անկախությունը Լիբանանի հայ գաղութը եղաւ մեր պահանջատիրութեան տէրը: Հետեւաբար, թէեւ այսօր Լիբանանի հայ գաղութը նուազանց է, սակայն ան չէ դադարած միակ գաղութներուն միջնաբերդը ըլլալէ:



Գաղութի նահանգն է պատճառը հայ դպրոցի նահանգին:

Պ. - Նուրաբուրդ կրնայ նաեւ իր ազդեցութիւնը ունենայ դպրոցին վրայ, սակայն որեւէ ժողովուրդի համար դպրոցը պէտք է ըլլայ իր վիճակին իսկական համար: Դպրոցին կենսունակ կենտրոն չափ կարեւոր է մեր ազգային պահպանումը համար, որովհետեւ հայ դպրոցն է, որ կը ջանքէ հայեցի դաստիարակութիւն, կը պահէ լեզուն, կը պահէ մշակութիւնը: Հետեւաբար մենք պէտք է գործադիր կանոններ հայ դպրոցին: Պէտք չէ ձգել այն տպաւորութիւնը, որ հայ դպրոցը անտեսուած է կրթական եւ եկեղեցական պատասխանատուներու կողմէ:

Աւետիք Իսահակեանը շատ գեղեցիկ խօսք մը ունի. «Որքան հայ լեզուն ապրի, հայ ժողովուրդը չի մեռնիր: Որքան հայ ժողովուրդը ապրի, հայ լեզուն չի մեռնիր»: Այս երկուքին նահանջը կապուած է հայ դպրոցին: Մեր այսօրուան բարեկեցիկ հայ ընտանիքները իրենց զաւակները հայկական դպրոց չեն զրկեր: Հայ դպրոցը այլ դպրոցներուն հաւասար ուսման մակարդակ ունի:

Հ. - Ի՞նչպէս կը պատկերացնէք հայ կարողիկէ վարժարաններու ներկայ վիճակը յարաբերաբար նախորդին:

Պ. - Մինչև 1975 հայ վարժարանները շատ փայլուն վիճակի մէջ էին: Սակայն իրանական ըրտուր դպրոցներուն նման, հայկական վարժարանները եւս աւելցան 17 տարիներու եղբայրասպան կռիւներէն: Բնականաբար կաթողիկէ վարժարանները եւս, որոնք թիւով եօթն էին, իրենց անկումը ունեցան: Սակայն, բարեխառնաբար, այս շրջանին կաթողիկէ վարժարանները աճ կ'արձանագրեն, որովհետեւ ճիգ չենք խնայել անոնց բարելաւումին համար: Մինչև

Շար.՝ Էջ 10

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԻՊԱՐՆԵՐԸՆ 3ԱՐՈՒԹԻՒՆ ԿՈՒԺՈՒՆԻ (1916 - 1976)

Լիբանանահայ մեր ազգային կեանքին կերտման իրենց ներդրումը բերած նուիրեալ անձերէն մէկուն կեանքին ու գործին կը վերաբերի նոր լոյս տեսած «Լիբանանահայտնութեան ղեկավարի տիպարներէն ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿՈՒԺՈՒՆԻ» հատորը, գործադրած է Պէպօ Միմոնեան: 526 էջերէ բաղկացած պատկերազարդ այս հատորը կ'արձագանգէ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան նուիրելի ու քաղաքական գործընկեր Յարութիւն Կուժուի տիպար կեանքը: Կուժուի տիպարը հանրապետութեան մասին: Ամբողջութեամբ վկայագրական գրականութեան մեր հայ հատորը, ուր արձանագրուած են զրուստայից տողեր, արժեւորումներ, 26 տարի առաջ կանխահասօրէն մահացած կուսակցական գործընկեր յիշատակին:



Կուժուի կեանքն ու գործը՝ խմբագրող մանրամասնօրէն թուած է այն բոլոր տխուր եւ ուրախ դէպքերը, միջկուսակցական կեցուածքային բախումները, մասնաւարարար Հ. Յ. Դաշնակցութեան հետ, 1956-ին ծագած եկեղեցական պայքարին առնչուած: Այս անկունին դիտուած աւելի քան 45 տարուան անցեալ ունեցող անհամաձայնութիւններու պատճառով ստեղծուած երկպառակութիւնը, որ ծագած է եղբայրացական բախումներու, կը դատապարտէ Պ. Միմոնեան, ընթացողին յիշեցրելով ցաւալի անցեալ մը, որ դատապարտելի է անուշտ բոլորիս համար... 1956 - 1958 թուականները իրօք լիբանանահայտնութեան համար եղանակաւոր տարիներ, խորհրդային Հայաստանի համայնավար ղեկավարներուն զրգումով: Այս հարցերուն շուրջ երկու հաստատած է Լիբանանի պետական թէ քաղաքական դէմքերուն հետ, Քամայ ժողովարարի օրերուն, անոր հետ յայտնաբերուած կապերը ու ներքին ղեկավարութեան ծակտակական պահերուն ինքեղած է իր կուսակցութեան բաները լիբանանեան ղեկավարութեամբ քննարկողի եւ զրուստայից կուսակցութեան յանգրուած վարժարաններէն: Պէպօ Միմոնեան եղած է գործակից մը, հիացող մը՝ անոր սկզբունքային անխախտ կեցութեան, գաղափարապաշտ Նիւտոնի նման իրումին, ու կ'ըսէ. «Ըմպած էր կուսակցութեան մարտաւարութիւնը, գաղափարապաշտ առաջնորդ ժողովարար հանդարտաբար ընկեր մը եղած է իր կուսակցութեան շարքերէն ներս, երիտասարդ տարիքէն, ու գրեալով իր երէց թէ կրտսեր գաղափարակիցներուն ունեցած ղեկավարութեան: Օրինակները մէջը կ'ըսէին, որ Կուժուի իստուական քննարկողի, հետեւողական, ուշադիր փնտրող պարզաբանող, միշտ Հնչակեան Կուսակցութեան մարտաւարութեան մէջ կը նշուի նախապէս մատակարար մը՝ վստահութիւն ներշնչելով ո՛չ հետ իր հանդիպումները, Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչի հանգամանքով: Ահա թէ ինչպէս յաջողած է անոր հետաքրքրական մէկ հանդիպում - զրոյցը խորհրդային Միութեան ղեկավար Նիքիթա խրոշչեւի հետ: Այս հանդիպումը ընթացեալ թիւերէն թիւերէն Յարութիւն Կուժուի տիպարը իր ներդրումը, որով ծագեցած է նախկին ղեկավարի մշակութային շարժումը: Սա կը նշանակէ, որ Յ. Կուժուի յանձնառուութիւնները չեն սահմանափակուած միայն կուսակցական ոլորտով, այլ եւ

Հ. - Ի՞նչպէս կը պատկերացնէք մեր գաղութին այսօրուան կացութիւնը քաղաքական, տնտեսական-ընկերային եւ ազգային առումով:

Պ. - Դժբախտաբար քաղաքական վիճակը այնքան փայլուն չէ: Լիբանանահայտնութեան դերը երկրին քաղաքականութեան մէջ մեծ էր, սակայն այսօր դժբախտաբար այդպէս չէ: Մենք ունենք երեսփոխանական պետութիւն, որ իր խօսքը եւ կշիռը ունի քաղաքական գործի վրայ, սակայն այսօր ցաւ ի սիրտ այդպէս չէ: Ինչ կը վերաբերի տնտեսական վիճակին, միջազգային գետնի վրայ արդէն իսկ տնտեսական տագնապ կայ, սակայն հոս այդ մէկը անխել շեշտուած է եւ, անշուշտ, ազգային ու ընկերային կեանքը շատ կապուած է տնտեսական զարգացումին:

Հ. - Իրրէւ Սփիւռք եւ յատկապէս լիբանանահայ գաղութը, ի՞նչ դեր ունինք Հայաստանի բարգաւաճման գործընթացին մէջ, իսկ փոխարձաբար ի՞նչ պէտք է ակնկալել հայրենիքէն:

Պ. - Ես տարբերութիւն չեմ գտնում Սփիւռքի միակ գաղութներուն եւ Լիբանանի հայ գաղութին միջեւ, որովհետեւ Սփիւռքի հայտնութիւնը պէտք է միշտ իր պարտականութիւնը կատարէ հայրենիքին նկատմամբ: Պետութեան մը համար իր Սփիւռքը իր մեծագոյն ուժն է: Սակայն դժբախտաբար իսրայէլի հայրենիքը՝ Սփիւռքը փոխադարձ վստահութիւնը պահպանելու Սփիւռքը կ'ուզէ դառնալ Հայաստանի գործակիցը եւ ո՛չ միայն նիւթական միջոցներ ապահովողը: Հայրենիքը պարտականութիւն ունի Սփիւռքի գաւազաններուն հանդէպ, անոնց նկատմամբ պէտք է ցուցարարէ միեւնոյն գործադրանքը, որ ունի Հայաստանի քաղաքացիներուն հանդէպ: Պէտք չէ մոռնալ, որ Սփիւռքը իր տնտեսական եւ քաղաքական կշիռը ունի:

Հ. - Կը բաժնէք այն կարծիքը, որ ընդհանրապէս հայ դպրոցը հայելին է մեր գաղութին, այսինքն՝

ԼՕՆԻ «ԿԱՐՍ» ՄԱՍՆԱԾԻՂԻ ՆԱԽԱԾԱԾԻ ԶԵՆԱՐԿԻՆ

ՍՆՆԻԱԳԷՏ ՔԱՐԼԱ ԵԱՐՏԸՄԵԱՆ ԿԸ ԲԱՑԱՏՐԷ ԱՌՈՂՋ ՍՆՆԻԱՌՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

ԼՕՆԻ «Կարս» մասնաճիւղի (էջերՖի) կազմակերպութեամբ Չորեքշաբթի, 13 Նոյեմբերին տեղի ունեցաւ նախաճաշի ձեռնարկ մը, որ կ'ընդգրկէր նաեւ գրասխառութիւն: Օրուան գրասխառութեան էր անդադէտ Քարլա Եարտըմեան, որ ներկայներուն տուաւ անդադանոնի եւ յատկապէս ճիշդ ձեւով անանեղ մասին շահական գրասխառութիւն մը:

Ոստիկան Սփիւռքի կանանց անդադանոնի մասին, գրասխառ միաժամանակ ներկայացուց անդադանութեան բուրգը, նշելով, թէ իւրաքանչիւր անդադանութիւն ունի իր սպառելիքը՝ ստանալու համար հաւասարակշռուած սնունդ մը: Ան շեշտեց, թէ միջերկրականեան անդադանոնը հարուստ է հաւասարակշռուած ճաշատեսակներով, որոնք կարեւոր չափով կը յարգեն անդադանութեան բուրգին օրէնքները:

Մանրամասնութեամբ անդադանոնով անդադանութեան բուրգին իւրաքանչիւր բաժանումներին, Քարլա Եարտըմեան միաժամանակ խօսեցաւ կենսաանութեան ներկայացուցած անհրաժեշտութեան մասին եւ թէ անոնցմէ իւրաքանչիւրը ի՞նչ օգտակարութիւն ունի մարդկային մարմնին համար եւ թէ ո՛ր տեսակի հիւանդութիւններու հաւանականութիւնը կը պակսեցնէ կամ անոնց նախադրման կը հանդիսանայ:

Ինչ կը վերաբերի հիւանդութիւններու կարեւոր մասին պատճառ հանդիսացող իւրին, շաքարին եւ աղին չափազանց գործածութեան, անդադանը սրուակներու մէջ շօշափելի օրինակներով ներկայացուց, թէ տուեալ անդադանով կամ ճաշը ի՞նչ քանակով կը պարունակեն վերոյիշեալ նիւթերը եւ թէ անոնցմէ որքանը անհրաժեշտ է մարմնին համար եւ ո՛րքանը կը կուտակուի մարմնին մէջ՝ դուռ բանալով զանազան հիւանդութիւններ: Ան միաժամանակ նշեց, որ օրինակներով բացատրեց, թէ ծանր նկատուող ճաշերը «թեթեւ» ճաշերով փոխարինելով՝ անհանգիստ կարեւոր համեմատութեամբ կը պակսեցնէ մարմնի մէջ վնասակար նիւթերու կուտակումը: Ոստիկան Սփիւռքի անդադանութեան մասին, Քարլա Եարտըմեան բացատրեց, որ Սէ. կենսաանութիւնը հարուստ ուտելիքներու, ինչպէս՝ կանաչ պղպե-

ղի, ազատքեղի, լոլիկի եւ նարինջի ընտանիքի պտուղները պէտք է ունենան անհրաժեշտ սպառումը կ'ապահովեն ընտանիքի անդադանը: Սննդագէտը մասնաւորաբար շեշտեց չորս անդադանութիւն՝ սոյալի, կանաչ թէյի, կոծապղպեղի (ճինճըր) եւ սխտորի ներկայացուցած օգտակարութիւնները՝ մանրամասնութեամբ բացատրելով անոնց պարունակած հանքային աղբուրն, կենսաանութիւնը, հակաթոյն նիւթերուն եւ օգտակար իւրիւրները: Սննդագէտը մարդկային առողջ մարմնի մը համար:

Քարլա Եարտըմեան՝ գրասխառութեան պատիւով

Գրասխառութեան աւարտին, Քարլա Եարտըմեան ներկայներուն բացատրեց սոնական մօտեցող օրերուն առկողմ մարմնին ծանրութիւնը շաքարեղէնի միջոցները եւ թեթեւացնող ըլլալ ժողովուրդը: Հետաքրքրական էր նաեւ հայկական սօնական ճաշերու ջերմութեան ներկայացնող անոր ցանկը, որ բաժնուցաւ ձեռնարկին ներկայներուն:

Քարլա Եարտըմեանի գրասխառութեան աւարտին, իսրայէլու միջնորդու մէջ շարունակուեցաւ ԼՕՆԻ «Կարս» մասնաճիւղին նախաճաշի ձեռնարկը:



Մասնաւորաբար լուսարձակուած արժեքները հարցազարմարումները, հարցերը լրջութեամբ քննարկողի եւ զրուստայից կուսակցութեան յանգրուած վարժարաններէն: Պէպօ Միմոնեան եղած է գործակից մը, հիացող մը՝ անոր սկզբունքային անխախտ կեցութեան, գաղափարապաշտ Նիւտոնի նման իրումին, ու կ'ըսէ. «Ըմպած էր կուսակցութեան մարտաւարութիւնը, գաղափարապաշտ առաջնորդ ժողովարար հանդարտաբար ընկեր մը եղած է իր կուսակցութեան շարքերէն ներս, երիտասարդ տարիքէն, ու գրեալով իր երէց թէ կրտսեր գաղափարակիցներուն ունեցած ղեկավարութեան: Օրինակները մէջը կ'ըսէին, որ Կուժուի իստուական քննարկողի, հետեւողական, ուշադիր փնտրող պարզաբանող, միշտ Հնչակեան Կուսակցութեան մարտաւարութեան մէջ կը նշուի նախապէս մատակարար մը՝ վստահութիւն ներշնչելով ո՛չ հետ իր հանդիպումները, Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչի հանգամանքով: Ահա թէ ինչպէս յաջողած է անոր հետաքրքրական մէկ հանդիպում - զրոյցը խորհրդային Միութեան ղեկավար Նիքիթա խրոշչեւի հետ: Այս հանդիպումը ընթացեալ թիւերէն թիւերէն Յարութիւն Կուժուի տիպարը իր ներդրումը, որով ծագեցած է նախկին ղեկավարի մշակութային շարժումը: Սա կը նշանակէ, որ Յ. Կուժուի յանձնառուութիւնները չեն սահմանափակուած միայն կուսակցական ոլորտով, այլ եւ

Ներկայացնելով Յ.

ՀԱՂԱՆԴՈՒՄՍ

ՃԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ «Ազգակ» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումը բնագիր ընթերցող գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական քուլթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգակ» ծանուցումներու գրասենյակը:

Գրական Էջ

ԻՐ ԵՐԿՐԻՆ ՊԷՍ

Սփյուռքահայ գրականության անաչից սերունդի մեկ եղբոր անունով հայտնի է Մուսկոյի «Խրճիթներէն մինչեւ խորհրդարան» կիսաւարտ անգամաւոր վեպն ու նոյն հեղինակին արձակ ու չափածոյ բանաստեղծութիւնները մերօրեայ հայ ընթերցողին ներկայացնելու առաջադրանքով «Գեորգ Մելիքիցի» գրական մրցանակի դատակազմը, իրեն նոյնանուն մատենաշարի 51րդ հրատարակութիւնը, վերջերս վերահրատարակեց 160 էջեր հաշուող համապարփակ հատոր մը:

Օհան Կարո, կամ աւագանի անունով՝ Յովհաննէս Կարապետեան գոյգ գոյականներով հագուած անօր տարաբախտ հայրորդի մը, որ «Հայրենիք» ամսագիրի, «Յառաջ» օրաթերթի, «Նաւասարդ»-ի, «Երկունք»-ի, «Ազգարար»-ի, «Կեանք եւ Արուեստ»-ի եւ այլնուն հրատարակութիւններու մէջ, Օհան Կարո, Բանուոր Խե-Մա եւ Մուսասիի ծածկանուններով արձակ ու չափածոյ ստեղծութիւններ ստորագրելէ տասնամեակ մը ետք, նախապահ լուր տնօրինումով, 27 Ապրիլ 1933ին այս աշխարհէն ընդմիջող բաժնուցեալ 43 տարեկան հասակին՝ իր ետին ձգելով տար ու բարբախտ ստեղծութիւններ համատեղ վաստակ մը: Պարզ խօսքով՝ որբերու սերունդին ազնուագոյն եւ տարաբախտ դեպքերէն մեկը, որ իր աչքերը լոյսին բացաւ 1890ին, Վասպուրականի Նոր-Գիւղին մէջ, չքաւոր ծնողքին հետ նաշակեց կեանքի անցկացում պայմաններ, եղաւ բոլորի աշակերտ եւ ուսանող, յետոյ Աղբաւարի միջնակարգ վարժարանը աւարտելէ ետք, ուսուցիչ Հայոց Զորի եւ Կարկառի մէջ:

Համարաբար այս խաղաղ կշռոյթով ալ շարունակուէր երիտասարդ ուսուցիչին ազգանունէր կեանքը, եթէ 1915ի Եղեռնը չալկոծէր նաեւ իր ողջ եւրոպայէն ու գոյութիւնը, որուն հետեւեալներով Քեդի 4րդ գումարանի մէջ կամաւոր արձակագրութեամբ Յովհաննէս Կարապետեան ցեղին գոյամարտին մասնակցեցաւ յաւելելով վեճականութեամբ՝ իրեն անսակարկ գործի եւ ազնիւ խօսքի անկեղծ գիմուոր:

Այսպէս, 1917ին Նորքի նախկին արհեստագործական ծառայելու նուիրուած ուսուցիչը, կարճ ժամանակ մը անց, պիտի յայտնուէր Սարգստեանի «Մուսկոյի Կեդր» Կոմիտէի որբանոց»-ին մէջ: Անոր կեանքի վերիվայրուամբնում հետ քայլ պահող գրասէրը յաջորդ տարին գինք պիտի տեսնէ Դարաչիչակի որբանոցային աշխատանքներուն մէջ, իսկ 1919ին՝ իրեն Երեւանի Ամերիկեան Նպաստամատոյցի աղջկանց վարժարանի աւագ ուսուցիչ եւ նոյն հաստատութեան կրթական գործերու բաժնի վարիչ:

Աւելի ուշ՝ նորանկախ Հայաստանի Հանրապետութեան այս անձնաժողովուրդեան, 1920ին, Փետրուարեան պատմութեան Ետք, իր գաղափարի ընկերներուն հետ Երեւանէն պիտի ստիպուէր անցնել Պարսկաստան եւ անկէ Փարիզ, ուր Օհան Կարո պիտի շարունակէր գործել նոյն նուիրումով եւ միեւնոյն խանդավառութեամբ՝ իրեն հաւատարմ ու ջերմեանող անդամներէն մեկը 1923ին հիմնուած Երիտասարդ Գրողներու Միութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան: Եւ գրական-մշակութային իր եռուն կործուցումներէն կողքին՝ Օհան Կարո գաղափարապաշտ հայրորդին պիտի ստանձնէր նաեւ կուսակցական լուրջ պատասխանատուութիւններ, երբ օտար հողին վրայ պիտի դառնար անդամ Հ. Յ. Դաշնակցութեան Երուզայի Կեդր, Կոմիտէի: Եւ պիտի դառնար ամբողջապէս նուիրում ու ինքնամատուցում՝ գրական, մշակութային, հասարակական նախաձեռնումներ վրայ, հակառակ իր առողջական ծանր վիճակին:

Պիտի մագլցել կեանքի եւ ցեղին նախապահ իր դառն ու դաժան հանգրուանները ի վեր, մինչեւ շունչ վերջին. կենդանի օրինակով, խօսքով ու գործով, դաշնակցական մտաւորականի վայել անանձնական հրեւումներով, ինքնաբաշխումով եւ ամբողջական հաւատարմութեամբ՝ ծառայութեան մեր գերագոյն օրինակ եւ սիրանքի ու նախաձեռնում առաջին ու վերջին ուսուցիչ Հայաստան անուն երկրին պէս:

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

ԽՐՃԻԹՆԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Մեր Սիդոններու խոտը հնձեցիցք, վաթաւորական որաներէ բարոյաներ շինեցիցք, որ երբ պետութեան մարդիկ համարելու գան, դիւրին ըլլայ իրենց համար: Մանուկի ջրաղացի արտն ալ հնձեցիցք, տեղը հերկեցիցք աշնանացանի համար եւ գարիները հասուցանան:

Զուածեզի պէս էին դարձեր լանջերու վրայ փռուած ոստիկները եւ մարդ յայտնով չէր կշտանար:

«Փա՛ռք քեզ, Աստուած, մեզի «նոր»-ին ալ հասցուցիր, քու ողորմութիւնդ շա՛տ է», կ'ըսէր տատ, երբ իրիկունները հասած հասկերու փունջ մը կը բերէի, որ կրակի վրայ խանձեմ ու եղալ շինեմ: «Մէկ-երկու հատիկ ալ ինձ տուր, Արմէ՛ն», կ'ըսէր, երբ խանձած հասկերը կը փռէի, կը մաքրէի ու կը բաժնէի մերոնց: «Այ չենք մեռնիր, նոր-ցորենին ալ արժանացանք», կ'ըսէր մայրս ու կ'աւելցնէր. «Բայց ի՛նչ օգուտ, նորէն շան ու գայլի բաժին պիտի դառնան այս լոյսի պէս հատիկները»:

Ինչ ալ որ ըլլար, ուրախութիւնը փռուէր էր գիւղին մէջ: Իրիկունները, կիները ուրախուէրանումն էր ու կ'երթային ու սեմերու առջեւ հաւաքուածներուն կ'ըսէին. «Աղջի, թանգիկ, կամ Ստեփօ, աղջիկ, չես գար մեզի «փոխանակի», մեր նպատի ոստին կը ճչայ»: Եւ իսկապէս՝ արտերը կը ճչային: Ծպուռներու անհաշիւ ձայներով կը

թնդար շրջակայքը: Կարծես ամէն հասկի վրայ, ամէն տերեւի վրայ, ճպուռ մ'ըլլար նստած եւ անոնց երգերու տակ հասկերն ու տերեւները կը ծռէին, կ'օրօրուէին, կը նուազէին ու կը քնանային:

«Ջան, ջան, ջան, ձեր ձայնին մեռնիմ ճիւղներ, մենք անարժան ենք, մենք չենք կրնար, գոնէ դուք փառաբանեցէք զԱստուած»... կ'ոգեւորուէր ու կը կանչէր մեծ մայրս եւ կը սկսէր պատմել, թէ ինչպէս յաճախ իր քունը կու գայ ճպուռներու ձայնէն եւ ճնճողակները առիթէն օգտուելով, աւերածութեան կ'ելեն Դոան-Արտին մէջ՝ հաւերուն հետ միացած:

«Շատը գնաց, քիչը մնաց, մարէ՛, Աստուած մէջ յաղորդութիւն տայ, մէկ-երկու շաբաթ յետոյ կ'ազատուի շարժարան-քէլ», - մանուկ մը համոզեցու պէս կը միթիթարէր գայն մայրս:


«Ի՛նչ շարժարանք, որ-դի՛, երանի թէ Աստուած տար ինձ - տասն երկու տարիս առ տեսակ շարժարանք տար ինձ, խօ, ձեզ մէկ աւել չե՛մ»:

Այո՛, համեմատած մօրս, հարսի եւ Ծոփիկի աշխատանքին՝ երանուածութիւն էր տատիս վիճակը: Կը նստէր յաղթահարող ու հնամենի ընկուզենու ստուերին տակ, տերեւներու անդադրուած սօսփիւններու ներքեւ, աղջն երեւցող կապուտ տակ ու փափուռ ծոփէն եկող հոփին զիմացը ու կը

ՕՂԱՆ ԿԱՐՈ

ՕՂԱՆ ԿԱՐՈ

Փարիզի մէջ երկու տարիէ ի վեր երիտասարդ գրողները, արուեստագետները «Գրական հաւաքոյթ» անունով հանդիպումներ կ'ունենան, ուր իրենցմէ իրաքանչիւրը կը բերէ իր աշխատանքները իր ընկերներուն դատաստանին ենթարկելու, անոնց կարծիքը լսելու համար: Այս հաւաքոյթներէն մեկուն մէջ էր, որ անչափաքան Օհան Կարոյի գործերը: Թարիզէն եկած արուեստագետ տղայ մը, որ Ամերիկա պիտի երթար, իրեն հետը կը տանէր Օհան Կարոյի մէկ գիրքը՝ «Միկաթի» խորագիրով օրագիր մը հրատարակելու համար: Մեզի բերաւ կարդաց: Առաջին ընթերցումէն իսկ համակրութեան ալիք մը բարձրացաւ ամէն կողմէ: Քիչ անգամ կը պատահէր, որ որեւէ գործ այդքան բուռն համակրանքի կ'արժանանար. զայն չսիրեցին միայն երկու հոգի: Ի վերջոյ գիրքը յանձնուեցաւ Վ. Ահարոնեանին, որպէսզի կարդայ զայն ու յաջորդ անգամ բերէ հաւաքոյթին՝ աւելի լրիւ կարծիք մը յայտնելու համար: Որքան կը յիշեմ երկրորդ անգամ աւելի նպաստաւոր կարծիք մը կազմուեցաւ բանաստեղծին մասին, բան մը, որ անմախքաբար է Փարիզի երիտասարդ հայ գրողներու շրջանակին մէջ, ուր անհամար յաւակնութիւններ գիրար կը խաչաձեւեն:



տունը կը դասն գերագոյն նպատակը արուեստին: Վանցի պատանին արեւմտեան արուեստին մէջ իր մարգարէները անօգուտ չէ վատնած:

չի գտնէր հոս մեր մէջ, Աերդաշնակութիւնը մարդոց բոլոր հոգիներուն, խաղաղութիւնը, որ բարոյեան չափ քաղցր է ու բեղմնաւոր: Ու թոյլ տանք, որ ինք իր բարի բառերով բացատրէ մեզի այլաբանօրէն, թէ ինչպէս կը թուի իրեն մեր աշխարհը իր մեծասէրի խցիկին պատուհանէն:

«Խրախճանքի այս սեղանին առջին ու այս երփ-Աերանգ վայելքներուն մէջ ախորժագուրկ եմ ու անհանգիստ: Ես հիւանդ չեմ, ոչ ալ խորոտիկներն են անորոքեան, բայց չկայ, բայց մոռցուած է այն՝ ինչ էս կ'ուզեմ:

«Շատ գեղեցիկ եւ յուզիչ մտուք ու զանազան արձակ մը մեծ գործի մը արժեքն բարձրացող այն պատմուածքը, որ կը կրէ «Խրճիթներէն մինչեւ խորհրդարան» վերնագիրը: Հեղինակը, Օհան Կարո, պատուական դաս մը կու տայ մեր գիւղագիրներուն (արեւելահայ դպրոց), որոնք անհամ պատմուածքները արուեստին: Վանցի պատանին արեւմտեան արուեստին մէջ իր մարգարէները անօգուտ չէ վատնած:

Յ. ՕՂԱԿԱՆ

